

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***


Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1

Նկարում  $n^{\circ}$  թվով է նշված հարավային ցուրտ ջերմային գոտին.



- 1) 5
- 2) 1
- 3) 2
- 4) 4

2


$\Omega^{\circ}$  ըն է ամենափոքր մասշտաբը.

- 1) 1 : 25 000 000
- 2) 1 : 25 000
- 3) 1 : 250 000
- 4) 1 : 2 500 000

3

Նկարում  $\varphi$  կետը հորիզոնի  $n^{\circ}$  թ կողմում է.

- 1) հարավարևելյան
- 2) հյուսիսարևելյան
- 3) հյուսիսարևմտյան
- 4) հարավարևմտյան



4

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է Գրինվիչի միջօրեականով:
- 2) Երկիրը սեփական լույսը ստանում է Լուսնից:
- 3) Իր առանցքի շուրջը Երկիրը պտտվում է 1 ժամում:
- 4) Միջօրեականներն իրար հավասար են:

5

**Օվկիանոսների հատակում տեղի ունեցող երկրաշարժերից առաջանում է կործանիչ ալիք, որը կոչվում է.**

- 1) մակընթացություն
- 2) տեղատվություն
- 3) ցիկլոն
- 4) ցունամի

6

**Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ջերմաստիճան ունեցող վայրերը միացնող գիծը կոչվում է.**

- 1) իզոհիպս
- 2) իզոբար
- 3) իզոթար
- 4) իզոթերմ

7

**Բնատարածքային համալիրների փոփոխությունն ըստ բարձրության կոչվում է.**

- 1) ջերմաստիճանային շրջադասություն
- 2) վերընթաց գոտիականություն
- 3) հորիզոնական զոնայականություն
- 4) աշխարհագրական թաղանթ


8

**Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը – 14° է, իսկ նույն պահին ստորոտում + 4°: Օդի ճնշումը գագաթին 380 մմ է: Օդի ճնշումը լեռան ստորոտին կլինի (հաշվարկը կատարել 6°-ով).**

- 1) 680 մմ
- 2) 80 մմ
- 3) 365 մմ
- 4) 395 մմ


9 Նկարում Ա տառով նշված է Երկրի.

- 1) երկրակեղևը
- 2) միջուկը
- 3) միջնապատյանը
- 4) թույլլուրտը



10 Նկարում պատկերված է.

- 1) ձմեռային մուսսոն
- 2) ամառային մուսսոն
- 3) գիշերային բրիզ
- 4) ցերեկային բրիզ



11 «Հարթավայր — աշխարհամաս» գույգից ընտրել *սխալը*.

- 1) Լենքորանի — Եվրոպա
- 2) Միջագետքի — Ասիա
- 3) Դեկանի — Ասիա
- 4) Հյուսիս-Գերմանական — Եվրոպա

12 Բնութագրումով որոշել բնական զոնան.

*Այդ բնական զոնայում ձմեռը ցուրտ է, ամառը՝ տաք: Տեղումների տարեկան քանակը 400–500 մմ է: Գերակշռում է խոտային բուսականությունը: Ո՞րն է այդ բնական զոնան.*

- 1) տունդրան
- 2) սավաննան
- 3) տափաստանը
- 4) անապատը

13

**Բնութագրումով որոշել թերակղզին.**

*Այդ թերակղզին Հարավային Եվրոպայում է: Արևմտյան ափերը ողողում են Տիրենյան, արևելյանը՝ Ադրիատիկ ծովերի ջրերը: Հարավում այն նեղուցով անջատվում է Սիցիլիա կղզուց: Ո՞ր թերակղզին է.*

- 1) Փոքր Ասիա
- 2) Պիրենեյան
- 3) Ապենինյան
- 4) Բալկանյան

14

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Հավասարանկյուն պրոյեկցիայում աղավաղվում են միայն անկյունները, իսկ օբյեկտների մակերեսները և գծերի երկարությունները չեն աղավաղվում:
- 2) Երկրի գնդաձևության շնորհիվ նույն պահին նրա մակերևույթի տարբեր աշխարհագրական լայնություններում Արեգակի ճառագայթներն ընկնում են տարբեր անկյան տակ:
- 3) Երկրագունդը էլիպսաձև է և հասարակածից ավելի շատ է սեղմված, քան բևեռներից:
- 4) Ամենաերկար միջօրեականը գլխավոր կամ զրոյական միջօրեականն է;

15

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Մերձհասարակածային կլիմայական գոտի ամռանը թափանցում են արևադարձային չոր ու շոգ, իսկ ձմռանը՝ բարեխառն խոնավ և մեղմ օդային զանգվածները:
- 2) Հասարակածային կլիմայական գոտում օդի ջերմաստիճանը միշտ բարձր է, իսկ տեղումների քանակը՝ շատ:
- 3) Արևադարձային օդային զանգվածներն ունեն վարընթաց շարժում. իջնելիս տաքանում են և չորանում:
- 4) Արկտիկական և անտարկտիկական օդային զանգվածները չոր են, ցուրտ և շատ թափանցիկ:

16

**«Լիճ — թափվող գետ» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Տիտիկակա — Ամազոն
- 2) Մեծ աղի — Կոլորադո
- 3) Վանա — Եփրատ
- 4) Կասպից — Վոլգա

17

«Գետ — հորդացման սեզոն» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նիզեր — ձմեռ
- 2) Տիգրիս — ձմեռ
- 3) Յանցզի — գարուն
- 4) Օրինկո — ամառ

18

Ավստրալիայում ամենաշատ խոնավություն ստանում է (են).

- 1) Մեծ ջրբաժան լեռնաշղթայի հյուսիսային հատվածի հողմակողմ լեռնալանջերը
- 2) Էյր լճի ավազանը
- 3) մայրցամաքի ներքին շրջանները
- 4) մերձհասարակածային գոտին՝ հասարակածային մուսսոնների տեսքով թափանցած պասսատների շնորհիվ

19


Ո՞ր կղզիներն են քարտեզում նշված Դ տառով.

- 1) Մեծ Անտիլյան
- 2) Փոքր Անտիլյան
- 3) Ֆոլկլենդյան
- 4) Բերմուդյան

20

Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզում նշված Զ տառով.

- 1) Սանտյագո
- 2) Մոնտեվիդեո
- 3) Բուենոս Այրես
- 4) Լիմա



21

Բնակչության աշխատունակ մասը, աշխատող մեծահասակներն ու երեխաները, որոնք իրենց ֆիզիկական կարողություններով, գիտելիքներով և փորձով կարող են աշխատել սնտեսության որևէ բնագավառում, կոչվում է.

- 1) սնտեսապես ակտիվ բնակչություն
- 2) ժողովուրդ
- 3) ռասա
- 4) աշխատանքային ռեսուրս

22

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ժողովրդագրական գործոնը տարաբնակեցման վրա չի ազդում:
- 2) Տարաբնակեցումը որոշակի տարածքում ձևավորված արտադրական ձեռնարկությունների ամբողջությունն է:
- 3) Քոչվոր տարաբնակեցումն առկա է Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում:
- 4) Ցրված տարաբնակեցումն առավել տարածված է ագարակային (ֆերմերային) գյուղատնտեսություն ունեցող երկրներում:

23

Բնութագրումով որոշել պետությունը.

*Գերխոշոր պետություն է: Հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.*

- 1) Բրազիլիա
- 2) Չինաստան
- 3) Ավստրալիա
- 4) Իրան

24

Երկրի բնակչության թիվը 20 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 5 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.

- 1) 75 %
- 2) 20 %
- 3) 35 %
- 4) 50 %

25

«Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) անգլիացի — գերմանական
- 2) ուկրաինացի — սլավոնական
- 3) իսպանացի — ռոմանական
- 4) տաջիկ — թուրքական

26

Տրվածներից ո՞րը ցամաքային սահման ունի միայն մեկ երկրի հետ.

- 1) Պերուն
- 2) Կանադան
- 3) Հունաստանը
- 4) Իսպանիան

27

Թելատու տեխնիկական մշակաբույսեր են.

- 1) գարին և բրինձը
- 2) արևածաղիկը և ցորենը
- 3) սոյան և ձիթապտուղը
- 4) բամբակենին և վուշը

28

Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է *սխալ*.

- 1) Բնակչության սննդակարգի մեջ մեծ է ձկան ու ծովային մթերքների բաժինը:
- 2) Մեքենաշինության ճյուղային կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն նավաշինությունը, էլեկտրոնային և ռադիոտեխնիկական մեքենաշինությունը:
- 3) Սև մետաղների հումքի աղքատ պաշարների պատճառով երկրում զարգացած չէ սև մետաղաձուլությունը:
- 4) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը բրինձն է:

29

Բնակչության տարիքային կառուցվածքում մեծահասակների բաժինը համեմատաբար մեծ է.

- 1) Թուրքիայում և Հունաստանում
- 2) Չինաստանում և Հնդկաստանում
- 3) Իրանում և Պակիստանում
- 4) Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում



30 **Բացարձակ միապետություններ են.**

- 1) Գերմանիան և Ավստրալիան
- 2) Ռուսաստանը և Ֆրանսիան
- 3) Սաուդյան Արաբիան և Բրունեյը
- 4) Իսպանիան և Ճապոնիան

31 **Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.**

- 1) Ուգրեկստանը և Թուրքիան
- 2) Կոլումբիան և Ինդոնեզիան
- 3) Ֆրանսիան և Հունաստանը
- 4) Հնդկաստանը և Շրի Լանկան

32 **«Գետ — ավազան» գույգերից ընտրել սխալը.**

- 1) Կուր — Միջերկրական ծով
- 2) Եփրատ — Պարսից ծոց
- 3) Ճորոխ — Սև ծով
- 4) Արաքս — Կասպից ծով

33 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Լեռնաանտառային գորշ հողերը հումուսով ավելի հարուստ են, քան կիսաանապատային գորշ հողերը:
- 2) Լեռնային սևահողերում հումուսի պարունակությունը 1–2% է:
- 3) Կիսաանապատային գորշ հողերը հումուսով աղքատ են:
- 4) Մարգագետնատափաստանային հողերը հումուսով հարուստ են:

34 **Հայերը կազմում են ՀՀ բնակչության.**

- 1) 88 %-ը
- 2) 93 %-ը
- 3) 90 %-ը
- 4) 96 %-ից ավելին

35


ՀՀ տրանսպորտի բեռնաշրջանառության և ուղևորաշրջանառության աճը հիմնականում պայմանավորված է.

- 1) տրանսպորտային նոր ուղիների արագ կառուցմամբ
- 2) փոխադրումների հեռավորության աճով
- 3) տրանսպորտային նոր միջոցների շահագործմամբ
- 4) բեռների ծավալի և ուղևորների թվաքանակի աճով

36

Ո՞ր ջրամբարն է քարտեզում նշված Դ տառով.

- 1) Շամբի
- 2) Տոլորսի
- 3) Կեչուտի
- 4) Սպանդարյանի



37

Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված Ը տառով.

- 1) Վայք
- 2) Վեդի
- 3) Ջերմուկ
- 4) Եղեգնաձոր

38

**Երկաթաքարի հանույթով առաջատար երկրներ են.**

- 1) Ուկրաինան և Հայաստանը
- 2) Ճապոնիան և Չինաստանը
- 3) Բրազիլիան և Կանադան
- 4) Սաուդյան Արաբիան և Իրաքը

39

**Մթնոլորտի մարդածին աղտոտման աղբյուր է.**

- 1) փոշեհողմը
- 2) հրաբուխը
- 3) ավտոտրանսպորտը
- 4) լեռնային ապարների քայքայումը

40

**Մթնոլորտի ստորին շերտի տաքացումը ջերմոցային գազերի ու Երկրի մակերևույթից արձակվող երկարալիք ճառագայթների կողմից կոչվում է.**

- 1) ջերմոցային տնտեսություն
- 2) ջերմոցային էֆեկտ
- 3) ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա)
- 4) ջերմաստիճանի տատանման լայնույթ

41

**Գրել այն գետերի համարները, որոնք թափվում են Հնդկական օվկիանոս.**

- |             |            |
|-------------|------------|
| 1) Սիրդարյա | 5) Զամբեզի |
| 2) Մուրեյ   | 6) Տիգրիս  |
| 3) Ինդոս    | 7) Օրանժ   |
| 4) Մեկոնգ   | 8) Նիգեր   |

42

Գրել այն երկրների համարները, որտեղ արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում ջրաէլեկտրակայաններին.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Ուկրաինա  | 5) Ֆրանսիա  |
| 2) Ռուսաստան | 6) Կանադա   |
| 3) ԱՄՆ       | 7) Նորվեգիա |
| 4) Գերմանիա  | 8) Լիտվա    |

43

Գրել Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասի լեռնագրական միավորների համարները.

- |                        |                           |
|------------------------|---------------------------|
| 1) Կապուտջուղ լեռ      | 5) Ծղուկ լեռ              |
| 2) Ծաղկանց լեռներ      | 6) Բյուրակնի լեռնազանգված |
| 3) Աչքասար լեռ         | 7) Գեղամա լեռնազանգված    |
| 4) Ախալքալաքի սարավանդ | 8) Թոնդրակ լեռ            |

44

Տրված պետությունները դասավորել տարածքի մեծության նվազման կարգով.

- 1) ԱՄՆ
- 2) Չինաստան
- 3) Ռուսաստան
- 4) Կանադա

**ՀՀ կլիմայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) ՀՀ-ում կլիմաստեղծ գործոններից են մուսսոնները:
- 2) Հանրապետության տարածքը արևադարձային կլիմայական գոտում է:
- 3) Տարվա տաք կեսին տիրապետում են Իրանական բարձրավանդակից թափանցող արևադարձային օդային զանգվածները:
- 4) Տարվա ընթացքում առավելագույն տեղումները լինում են նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:
- 5) Տարվա ընթացքում ամենաշատ ամպամած օրերը լինում են Գեղարքունիքի մարզում (Մարտունի):
- 6) ՀՀ-ում միջլեռնային գոգավորությունների ցածրադիր մասերում ձմռանը դիտվում է ջերմաստիճանային շրջադասություն (ինվերսիա):

## Բ մակարդակ

46 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Իր առանցքի շուրջը պտտվելու հետևանքով Երկիրը բևեռային շրջաններում «փքվել է», իսկ հասարակածում՝ սեղմվել:
- 2) Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող գուգահեռականն ընդունված է անվանել հասարակած:
- 3) Երկրագնդի ամենամեծ շրջագիծը գլխավոր միջօրեականն է:
- 4) Գնդաձևության շնորհիվ հասարակածից դեպի բևեռներ ջերմությունն աստիճանաբար նվազում է:

47 Ո՞ր լայնություններին են բնորոշ ամբողջ տարվա ընթացքում մթնոլորտային բարձր ճնշման մարզերը.

- 1) հասարակածային և արևադարձային լայնություններին
- 2) արկտիկական և արևադարձային լայնություններին
- 3) բարեխառն և հասարակածային լայնություններին
- 4) արևադարձային և բարեխառն լայնություններին

48 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օվկիանոսի այն մասերում, որտեղ գոլորշացումը մեծ է, և գետեր չեն թափվում, ջրի աղիությունը միջինից բարձր է:
- 2) Օվկիանոսային տաք հոսանքները նպաստում են կլիմայի ցրտեցմանն ու մթնոլորտային տեղումների նվազմանը:
- 3) Օվկիանոսային սառը հոսանքներից տեղի է ունենում ջրի ակտիվ գոլորշացում:
- 4) Օվկիանոսի հատակի մինչև 200 մ խորություններն անվանում են մայրցամաքային լանջ:

49

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:
- 2) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 3) Մուսսոնային կլիմա ունեցող շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 4) Տորնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:

50

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Աֆրիկյան պլատֆորմը զբաղեցնում է միայն մայրցամաքի ծայր հյուսիս-արևմտյան նեղ ծովափնյա մասը:
- 2) Անտարկտիկական Անդերը ալպյան հասակի լեռներ են:
- 3) Ավստրալական պլատֆորմը արևելքից եզրավորված է երիտասարդ ծալքավոր լեռներով:
- 4) Բրազիլական սարահարթում գերիշխում են սառցադաշտերի գործունեությամբ առաջացած մակերևույթի ձևերը:

51

**Աշխարհում ամենամեծ թվով ներգաղթածներ ունեցող երկրներից են.**

- 1) Հնդկաստանը և Ուզբեկստանը
- 2) Չինաստանը և Մոլդովան
- 3) Ճապոնիան և Կորեան
- 4) ԱՄՆ-ը և Գերմանիան

52

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Եվրոպական երկրներում ձևավորվել է բնակչության վերարտադրության առաջին տիպը:
- 2) Երբ ծնելիությունը հավասար է մահացությանը, վերարտադրությունը կոչվում է պարզ:
- 3) Ջարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգ:
- 4) Ջարգացած երկրներում՝ բնակչության սեռային կազմում, կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:

53

«Անասնապահության ճյուղ — առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) մաստու անասնապահություն — Արգենտինա
- 2) կաթնային անասնապահություն — Ալժիր
- 3) ոչխարաբուծություն — Ֆինլանդիա
- 4) խոզաբուծություն — Թուրքիա

54

Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Անապատային, կիսաանապատային ու լեռնային շրջաններում զբաղվում են ոչխարաբուծությամբ:
- 2) Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով:
- 3) Ռադիոէլեկտրոնային սարքավորումներ, ռոբոտներ արտադրող առաջատար երկիր է:
- 4) Յուրացված ու բերրի տարածքներից է Հարավկասպիական դաշտավայրը:

55

Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Տեքստիլ արդյունաբերության խոշոր կենտրոնը Մանչեսթրն է:
- 2) Բնորոշվում է բնակչության պարզ վերարտադրությամբ:
- 3) Էլեկտրաէներգիայի արտադրության մեջ մեծ է ջեկերի բաժինը:
- 4) Աճեցվող հիմնական հացահատիկային մշակաբույսը բրինձն է:

56

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում ձգվում է Հայկական պար լեռնաշղթան:
- 2) Հայկական լեռնաշխարհի հարավային մասում՝ Միջագետքի հարևանությամբ, ձգվում է Ներքին Տավրոսի լեռնային համակարգը:
- 3) Հայկական լեռնաշխարհին արևելքից սահմանակցում է Արաբական սարահարթին:
- 4) Հայկական հրաբխային բարձրավանդակի կենտրոնական մասում վեր են խոյանում Արագած ու Գեղամա լեռնազանգվածները:



57

Ընտրել «գետ — վտակ» համապատասխանության ճիշտ շարքը.

- |            |           |
|------------|-----------|
| 1. Դերեղ   | ա. Գետիկ  |
| 2. Աղստև   | բ. Քասաղ  |
| 3. Արփա    | գ. Փամբակ |
| 4. Մեծամոր | դ. Եղեգիս |

- 1) 1-ա, 2-բ, 3-ա, 4-գ
- 2) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 4) 1-բ, 2-գ, 3-ա, 4-գ

58

ՀՀ-ում ո՞ր բարձրություններում է բնակչության միջին խտությունն ամենաբարձրը.

- 1) 1500–2000 մ
- 2) 1000–1500 մ
- 3) 2000–2500 մ
- 4) մինչև 1000մ

59

«Հանքավայր — օգտակար հանածո» զույգերից ընտրել *սխալը*.

- 1) Ագարակ — պղնձամոլիբդեն
- 2) Կապան — պղնձամոլիբդեն
- 3) Շվանիձոր — նեֆելինային սիենիտ
- 4) Սվարանց — երկաթաքար

60 Վայոց ձորի մարզի համար ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Արևելքից սահմանակից է Արարատի մարզին:
- 2) Բնական անտառների զբաղեցրած մակերեսը հանրապետության միջին ցուցանիշից ցածր է:
- 3) Տարածքում հայտնաբերվել են պղնձամոլիբդենային հարուստ հանքավայրեր:
- 4) Բացարձակ բարձրությունների տարբերությունը փոքր է:

61 ՀՀ տրված լճերի համարները դասավորել հյուսիսից հարավ հաջորդականությամբ.

- 1) Սև
- 2) Քարի
- 3) Արփի

62 Գրել մոլիբդենի հանքանյութի արդյունահանման կենտրոնների համարները.

- |             |            |
|-------------|------------|
| 1) Սոթք     | 5) Քաջարան |
| 2) Կապան    | 6) Ագարակ  |
| 3) Շամլուղ  | 7) Արարատ  |
| 4) Ալավերդի | 8) Ախթալա  |

63 Գրել այն երկրների համարները, որտեղ բնակչության կյանքի միջին տևողությունը բարձր է.

- |              |             |
|--------------|-------------|
| 1) Անգոլա    | 5) Ճապոնիա  |
| 2) Հնդկաստան | 6) Նիգեր    |
| 3) Բանգլադեշ | 7) Նորվեգիա |
| 4) Տաջիկստան | 8) Կամերուն |

64 Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ոչխարաբուծությամբ.

- |             |                 |
|-------------|-----------------|
| 1) Լեհաստան | 5) Նոր Զելանդիա |
| 2) Իրան     | 6) Արգենտինա    |
| 3) Գերմանիա | 7) Ուկրաինա     |
| 4) Կանադա   | 8) Ճապոնիա      |

65

Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե.  $40^\circ$ -ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե.  $70^\circ$ -ի: Որոշել քաղաքների ամենակարճ հեռավորությունը կիլոմետրով:

(66-67) Քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են՝  
 $-1^0, -4^0, -6^0, -2^0, 7^0, 16^0, 10^0, 4^0$ :

66

Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

67

Որոշել ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

(68-69) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ:

68

Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

69

Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

ՀՀ բնակչության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ-ն իր հարևան պետությունների համեմատ բնակչության բարձր խտություն ունեցող երկիր է:
- 2) Եզդիների մեծ մասը բնակվում են Արագածոտնի և Արմավիրի մարզերի գյուղական բնակավայրերում:
- 3) Մինչև 1000 մ բարձրությունները ՀՀ ամենանոսրաբնակ տարածքն է:
- 4) 1988-1990 թթ. ավելի քան 180 հազ. ադրբեջանցիներ Հայաստանից հեռացան, իսկ ազատված բնակավայրերում հաստատվեց Ադրբեջանից արտաքսված հայությունը:
- 5) ՀՀ բնակչության կեսից ավելին բնակվում է 1500-2500 մ բացարձակ բարձրության գոտում:
- 6) Բնակչության թվով երրորդ քաղաքը Գյումրին է: